

ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 2.66
«ՀԱՆ-ԳՀԾԶԲ-08/21»

Բ. Երևան «16» 08 2021 թ.

«Հայաէրոնավիգացիա» ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Flight Precision» ՍՊԸ, ի դեմս Տնօրեն Վոլֆգանգ Յորես, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է թռիչքային ստուգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն:

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը:

PROCUREMENT CONTRACT N 2.66
“ARM-GHTsDzB-08/21”

Yerevan “ 06 ” 08 2021

“ARMATS” CJSC, on behalf of the company General Director A. Gasparyan (hereinafter Customer), acting on the basis of “ARMATS” CJSC charter, on the one hand and “Flight Precision Ltd” on behalf of Director Wolfgang Jores (hereinafter Performer), acting on the basis of “Flight Precision Ltd” charter, on the other hand, concluded the contract on the following:

1. SUBJECT OF THE CONTRACT

1.1 The Customer shall assign and the Performer shall assume responsibility to provide Flight Check services (hereinafter Service) according to Technical Characteristics-Procurement Schedule under Appendix N 1 and N 1.1 hereof which are integral parts of the contract (hereinafter Contract).

1.2 The Service shall be provided in compliance with the Technical Characteristics-Procurement Schedule under Appendix N 1 and N 1.1 hereof and within the defined period.

2. RIGHTS AND OBLIGATIONS OF THE PARTIES

2.1 The Customer shall have the right to:

2.1.1 Check the process and quality of the Service provided by the Performer at any time without interfering with the activity of the Performer.

2.1.2 If the Service has not been provided in compliance with the Technical Characteristics-Procurement Schedule under Appendix N 1 and N 1.1 of the Contract:

a) refuse to accept the Service by defining at his discretion a reasonable period for the

<p>պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը:</p> <p>բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:</p>	<p>replacement of the improper Service with Service complying with the Contract free of charge and require Performer to pay the fine under point 5.2 as well as the penalty under point 5.3 of the Contract;</p> <p>b) refuse to perform the Contract and require the Performer to return the amount paid for the Service and pay the fine under point 5.2 of the Contract.</p>
<p>2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝</p> <p>ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 և N 1.1 հավելվածներով սահմանված պահանջներին,</p> <p>բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:</p>	<p>2.1.3 Unilaterally terminate the Contract if the Performer has substantially violated the Contract. Breach of the Contract by the Performer is significant if:</p> <p>a) the Service provided under the Contract does not meet the requirements set out in Appendix N1 and Appendix N1.1 of the Contract;</p> <p>b) the time limit of the Service provision has been violated.</p>
<p>2.2 Պատվիրատուն պարտավոր է՝</p> <p>2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագրի-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:</p> <p>2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:</p>	<p>2.2 The Customer shall be obliged to:</p> <p>2.2.1 consider and accept the outcome of the Service complying with the Technical Characteristics-Procurement Schedule and if any discrepancies are discovered during the acceptance of the Service results, immediately notify the Performer about it in writing;</p> <p>2.2.2 If the outcome of the Service is accepted, pay the Performer the payable amounts and if the time limit is breached, also pay the penalty set out in point 5.5 of the Contract.</p>
<p>2.3 Կատարողն իրավունք ունի՝</p> <p>2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:</p>	<p>2.3 The Performer shall have the right to:</p> <p>2.3.1. require the Customer to pay him the payable amounts and if the time limit, defined in point 4.2 of the Contract, is breached by the Customer also require the Customer to pay the penalty under point 5.5 of the Contract.</p>
<p>2.4 Կատարողը պարտավոր է՝</p> <p>2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով սպասիովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:</p>	<p>2.4 The Performer shall be obliged to:</p> <p>2.4.1 provide the Service according to the terms and conditions under Appendix N 1 of the Contract and the current legislation;</p>

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման սպառնալից գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրամասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն պոնտակները, որոնք վերաբերում են իր սովյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տասն աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից

2.4.2 in the cases covered by the Contract pay the fine and penalty set out in points 5.2 and 5.3 of the Contract;

2.4.3 in case of starting liquidation or bankruptcy process during the Contract performance period, notify the Customer in writing in advance.

3. DELIVERY AND ACCEPTANCE OF THE SERVICE

3.1 The Customer and the Performer shall bilaterally sign a delivery-acceptance protocol on the outcome of the provided Service. The fact of delivering the outcome of the Service to the Customer shall be established by a mutually confirmed document with the indication of the date the document has been drawn up.

The Performer till and including the Service provision deadline date shall submit to the Customer the document certifying the actual delivery of the provided Service to the Customer (Appendix N 3.1) signed on his behalf and also a delivery-acceptance protocol (Appendix N 3) through "armeps" system of electronic procurements (guidelines are set up in "Electronic Purchases" section at www.procurement.am). Moreover, the Performer shall approve the delivery-acceptance protocol with an electronic digital signature completing only the relevant fields (the procedure for completing is set up in Legislation www.procurement.am Finance Minister Orders section at www.procurement.am).

3.2 If the provided Service complies with the Contract terms and conditions, the Customer shall sign and submit the delivery-acceptance protocol and the positive opinion on the contract implementation results to the Performer through the electronic procurement "armeps" system within ten working days following the receipt of the documents

ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, սպա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, սպա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **57 320 (հիսուկոթ հազար երեք հարյուր քսան) Եվրո:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկեր, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

Միջազգային համաձայնագրի դրույթներից էլնելով՝ եկամուտների կրկնակի հարկումը

prescribed by point 3.1 of the Contract.

3.3 If the provided Service or a part thereof does not comply with the Contract terms and conditions, the Customer shall not sign the delivery-acceptance protocol and return the protocol and the negative opinion on the contract implementation results to the Performer through the electronic procurement “armeps” system within the time limits prescribed by point 3.2 of the Contract. For applying the conditions provided for by this point the Customer shall take measures foreseen by the Contract for such cases to settle the issue and apply responsibility measures under the Contract towards the Performer.

3.4 If the Customer does not accept or does not refuse to accept the Contract result within the period defined by point 3.2 of the Contract, the result is considered as accepted and the Customer shall submit the delivery-acceptance protocol confirmed thereby to the Performer through the electronic procurement system on the following day after the deadline date defined by point 3.2 of the Contract.

4. CONTRACT PRICE

4.1 The total price of the Contract for the Service to be provided by the Performer is **57 320 (fifty seven thousand three hundred twenty) Euros.**

The price includes all the expenses incurred by the Performer, as well as the taxes, duties and other mandatory payments according to the RA legislation.

The Service provision price is fixed and the Performer shall not have the right to require to increase and the Customer shall not have the right to require to reduce the price.

In order to exclude double taxation of income, proceeding from the provisions of the

բացառելու նպատակով ոչ ռեզիդենտը ՀՀ հարկային գործակալին ներկայացնում է մյուս պետության ռեզիդենտ հանդիսանալու մասին տեղեկանք, որում պետք է նշված լինի, որ ոչ ռեզիդենտը նշված տարում տվյալ երկրի ռեզիդենտն է: Նշված տեղեկանքը պետք է ներկայացվի մինչև ծառայության հանձնման-ընդունման արձանագրության ստորագրման պահը:

Ոչ ռեզիդենտի ռեզիդենտության վերաբերյալ տեղեկանքը չներկայացնելու դեպքում, Պայմանագրի ծառայության գնից Պատվիրատուն կվճարի Կատարողին **45856 (քառասունհինգ հազար ութ հարյուր հիսունվեց) Եվրոն**, իսկ մնացած **11464 (տասանեկ հազար չորս հարյուր վաթսուչորս) Եվրոն՝** հաշվարկված որպես ոչ ռեզիդենտի շահութահարկի գումար, ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և չափով Պատվիրատուի կողմից կփոխանցվի ՀՀ պետական բյուջե:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է Եվրոյով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1.1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

international agreement, a nonresident shall submit to the RA tax agent a certificate on being a resident of another country, in which it shall be stated that the nonresident is a resident of the marked country in the specified year.

If the nonresident fails to submit the certificate on a residency, the Customer will pay to the Performer **45856 (forty five thousand eight hundred fifty six) Euros** of the Contract price and the remaining **11464 (eleven thousand four hundred sixty four) Euros**, calculated as the nonresident's income tax, will be transferred by the Customer to the RA state budget in the manner and volume established by the RA legislation.

4.2 The Customer shall make a noncash payment in Euros for the provided Service through transferring the financial resources to the Performer's account number. The transfer of the financial resources shall be carried out based on the delivery-acceptance protocol in the amount and months defined by the payment schedule (under Appendix N2) of the Contract.

5. RESPONSIBILITIES OF THE PARTIES

5.1 The Performer bears responsibility for the Service provision according to the Contract requirements.

5.2 For each case if the Service is not provided in compliance with the Technical Characteristics under Appendix N 1.1 of the Contract, the Performer shall pay fine amounting to 0,5%(zero-point-five) percent of the price mentioned in Appendix 4.1 of the Contract.

5.3 If the Service provision period under the Contract is breached, for each delayed day the Performer shall pay penalty amounting to 0,05% (zero-point-zero-five) percent of the Service price calculated towards the price of non-performed part of the Service.

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Մույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհատթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, սպա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը:

5.4 The penalties and fines defined in points 5.2 and 5.3 of the Contract are calculated and transferred together with the sums payable to the Performer in the result of the Service provision.

5.5 If the Customer breaches the time limit under point 4.2 of the Contract, the Customer shall pay a penalty calculated for each day of the delay, however, in the amount of 0,05(zero-point-zero-five) percent of the unpaid amount.

5.6 In the cases not covered by the Contract if the Parties fail to perform or properly perform their obligations, they bear responsibility in the order determined by the RA legislation.

5.7 The payment of penalties and (or) fines does not release the Parties from the performance of their contractual obligations.

6. FORCE MAJEURE

The Parties are exempted from liability for the full or partial non-performance of their obligations under this Contract or Agreements signed on the basis of the Contract if it happens due to a force majeure which occurred after the Contract signature and which the Parties could not predict or prevent. Such events are earthquakes, floods, fires, war, announcement of military and emergency situations, political unrest, strikes, communication failures, acts of government bodies, etc., that lead to non-fulfillment of their obligations under this Contract.

If force-majeure endures more than 3 (three) months, either Party shall have the right to terminate the Contract informing the other Party about it in advance.

այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, սպա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են

7. MISCELLANEOUS

7.1 This Contract enters into force from the moment of its signature by the Parties and is valid until the Parties have completely fulfilled their contractual obligations.

7.2 The payment liability of the Party arising from the Contract cannot be terminated by offsetting a counter liability arising from other contract without the written and sealed agreement of the Parties. The right of claim arisen from the Contract cannot be transferred to other entity without the written consent of the debtor Party.

7.3 If in the result of a control or oversight or complaints review, carried out in the order foreseen by the Law directed to the fulfillment of the legislation requirements, it is registered that during the procurement process, before the Contract conclusion, the Performer has submitted falsified documents (information and data) or the decision about the Performer as a selected bidder does not comply with the legislation of the Republic of Armenia, after the discovery of such data the Customer shall have the right to terminate the Contract unilaterally, if the registered infringements, discovered before the Contract conclusion, according to the procurement legislation of the Republic of Armenia would have become a basis for not concluding the Contract. In addition, the Customer does not bear any risk of the Performer's losses or lost benefit due to the unilateral termination of the Contract and the Performer shall compensate for the Customer's losses occurred through the Performer's fault according to the procedure defined by the legislation of the Republic of Armenia and against the amount with regard to which the Contract has been terminated.

7.4 All the disputes arising from the Contract

<p>քննության դատարաններում:</p>	<p>Հայաստանի Հանրապետության</p> <p>7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագրի կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:</p> <p>Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, սպա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձևերի բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:</p> <p>Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:</p>	<p>shall be subject to examination in the courts of the Republic of Armenia.</p>
<p>7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության սովորական դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:</p>	<p>7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության սովորական դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:</p>	<p>7.5 Any additions and amendments to the Contract can be made only by the mutual consent of the Parties by signing an agreement, which will become an integral part of the Contract.</p> <p>It is prohibited to make such amendments in the Contract, and if the Contract price is factor based, in each subsequent agreement attached to the contract, which will lead to the artificial change of the procurement Service scope or Service unit price or Contract price.</p> <p>The government of the Republic of Armenia determines the cases when the Contract is amended owing to the influence of the factors beyond the control of the Contract Parties.</p> <p>7.6 The Service provision period may be extended before the expiry of the deadline if there is a proposal by the Performer, on condition that the Customer still has the need for the procurement subject. However, the Service provision period may be extended once and for up to 30 calendar days, but no longer than the time limit defined by the Contract.</p>
<p>7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:</p> <p>Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված</p>	<p>7.7 If the Contract is implemented properly, the benefits (savings) or the losses of the Parties (Performer or Customer) are the benefit or loss of that Party.</p> <p>The obligations of the Contract Parties towards the third entities including other contracts signed by the Performer within the frame of the Contract implementation and the liabilities arising from them are out of the Contract regulation framework and cannot have an influence on the acceptance of the Contract implementation result. The relations related to the implementation of such</p>	

հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հասկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հասկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 19 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

contracts and the obligations arising from them are regulated by the norms related to the regulation of such contracts relations and the Performer bears responsibility for them.

7.8 This Contract may not be amended due to the partial non fulfillment of the obligations by the Parties or completely terminated by the mutual consent of the Parties, with the exception of cases when the allocated financial resources are reduced, necessary for the procurement of the subject matter hereof, according to the procedure defined by the legislation of the Republic of Armenia. In addition, the mutual consent of the Parties for the partial non fulfillment of the obligations or complete termination thereof is necessary to obtain before the reduction of the financial resources necessary for that procurement according to the procedure defined by the legislation of the Republic of Armenia.

7.9 If the Performer fails to fulfill or improperly fulfills the Contract obligations, the Customer shall publish a notification about the unilateral termination of the Contract or any part thereof in “Notifications on unilateral termination of contracts” section at www.procurement.am indicating the publication date. The Performer shall be considered to be duly notified of the unilateral termination of the Contract on the day following the day of publication of the notification as prescribed by this point.

7.10 All the disputes arising from the Contract are settled through negotiations. In case of failing to reach an agreement, the disputes are settled in the RA courts.

7.11 The Contract is comprised of 19 pages and is concluded in two copies, which have equal legal force. Appendixes N1, N1.1, N2, N3 and N3.1 attached to the Contract are an integral part of the Contract, each Party will be given one copy of the Contract.

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.12 The Contract is subject to the law of the Republic of Armenia.

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

CUSTOMER:

<<Հայսեթրոնսավիզացիա>> ՓԲԸ
Ի.Գասպարյան 33
ք.Երևան-0042,
Հայաստանի Հանրապետություն
ՀՎՀՀ 01216144
<<Կոնվերս բանկ>> ՓԲԸ
h/h 1930000346890104
SWIFT CODE: COVBAM22
Correspondent bank: Commerzbank AG,
Frankfurt am Main, Germany
SWIFT Code: COBADEFF
Account No: 400888111200

“ARMATS” CJSC
I.Gasparyan 33,
Yerevan-0042,
Republic of Armenia,
Taxpayer identification number 01216144
“Converse bank” CJSC
Acc.No 1930000346890104
SWIFT CODE: COVBAM22
Correspondent bank: Commerzbank AG,
Frankfurt am Main, Germany
SWIFT Code: COBADEFF
Account No: 400888111200

ԿԱՏԱՐՈՂ

PERFORMER:

<<Flight Precision >> ՍՊԸ
Հասցեն Մեծ Բրիտանիա, 259 Wallasey Village,
Wallasey, Merseyside, CH45 3LR
հեռ/.ֆաքս +44 127 374 1270
BIN 08977861
VAT. GB249823473
Beneficiary account (IBAN) in EUR
SWIFT code: GB48 REVO 0099 6922 0586 45
SWIFT code: REVOGB21

«Flight Precision Ltd»
The address: 259 Wallasey Village, Wallasey,
Merseyside, United Kingdom, CH45 3LR
Tel/.Fax: +44 127 374 1270
BIN 08977861
VAT. GB249823473
Beneficiary account (IBAN) in EUR
GB48 REVO 0099 6922 0586 45
SWIFT code: REVOGB21

By Customer
Artur GASPARYAN
General Director
of “ARMATS” CJSC

signature / ստորագրություն
Stamp / Կ.Տ.

Պատվիրատուի կողմից
Արթուր ԳԱՍՊԱՐՅԱՆ
<<Հայսեթրոնսավիզացիա>> ՓԲԸ
Գլխավոր տնօրեն

By Performer
Wolfgang Jores
Director
of Flight Precision Ltd

signature / ստորագրություն
Stamp / Կ.Տ.

Կատարողի Կողմից
Վոլֆգանգ Յորես
<<Flight Precision>> ՍՊԸ
Տնօրեն

Հավելված N 1
 «16» 08 2021 թ. կնքված
 ՀԱՆ-ԳՀԱՊԶԲ-08/21 ծածկագրով պայմանագրի
Appendix 1
to the procurement contract
under code "ARM-GHTsDzB-08/21"
signed on "____" _____ 2021

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ
PROCUREMENT SCHEDULE

Եվրո Euro

Ծառայության						մատուցման	
Համարը Number	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) Code indicated in the procurement plan according to CPV classification	տեխնիկական բնութագիրը Technical characteristics	չափման միավորը Measurement unit	ընդհանուր գինը Total price	ընդհանուր քանակը Total scope	հասցեն Address	Վերջնաժամկետը Period
1	71631230/1	տե՛ս հավելված 1.1 See Appendix N 1.1		57320 Եվրո 57320 Euro	1	«Զվարթնոց» և «Շիրակ» օդ-ներ "Zvartnots" and "Shirak" airports	30.11.2021 2021թ. հոկտեմբեր- նոյեմբեր՝ ծառայության մատուցման ճշգրիտ ամսաթիվը կսահմանվի երկկողմ համաձայնության արդյունքում 30.11.2021 October-November, 2021 (the exact date of the service provision will be defined by mutual agreement)

By Customer
Artur GASPARYAN
General Director
of "ARMATS" CJSC


 signature / ստորագրություն
 Stamp / Կ.Տ.

Պատվիրատուի կողմից
Արթուր ԳԱՍՊԱՐՅԱՆ
<<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
Գլխավոր սնօրեն

By Performer
Wolfgang Jores
Director
of Flight Precision Ltd


 signature / ստորագրություն
 Stamp / Կ.Տ.

Կատարողի Կողմից
Վոլֆգանգ Յորես
<<Flight Precision>> ՍՊԸ
Տնօրեն

Գնման առարկայի տեխնիկական բնութագրերը
TECHNICAL CHARACTERISTICS

<p>1. Գնման առարկայի տեխնիկական հատկանիշները.</p> <p>1.1. Թռիչքային ստուգումները պետք է իրականացվեն ICAO-ի 10-րդ հավելվածի առաջին հատորով ILS CAT I-II, DVOR և DME սարքավորումների ներկայացվող պահանջների համապատասխանությամբ հաստատելու նպատակով և պետք է իրականացվեն ըստ ICAO-ի DOC 8071 փաստաթղթի :</p> <p>1.2. «Զվարթնոց» օ/կայանի ILS/DME CAT II և DVOR/DME ու «Շիրակ» օ/կայանի ILS/DME CAT I սարքավորումների թռիչքային ստուգումների ենթակա պարամետրերի ցանկերը ներկայացված են ICAO-ի DOC 8071 «Ռադիոնավիգացիոն միջոցների փորձարկումների ձեռնարկ» հատոր 1 փաստաթղթի համապատասխան աղյուսակներում:</p> <p>2. Գնման առարկայի ձեռքբերման պայմանները.</p> <p>2.1 Պետք է իրականացվեն «Զվարթնոց» օ/կայանում տեղակայված ILS/DME CAT II (երկու կիսալրակազմերի) և DVOR/DME (երկու կիսալրակազմերի), «Շիրակ» օ/կայանում տեղակայված ILS/DME CAT I (երկու կիսալրակազմերի) սարքավորումների տարեկան պարբերական թռիչքային ստուգումներ:</p> <p>2.2 Թռիչքային ստուգումները պետք է իրականացվեն 2021 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին՝ ծառայության մատուցման ճշգրիտ ամսաթիվը կսահմանվի երկկողմ համաձայնությամբ:</p> <p>2.3 Թռիչքային ստուգումների ժամանակ թռիչքները պետք է իրականացվեն վայրէջքային սխեմաներին համապատասխան (տես AIP ARMENIA գործող հրատարակություն): «Զվարթնոց» օ/կայանի DVOR/DME սարքավորումն թռիչքային ստուգումները պետք է կատարվեն միայն շրջանաձև թռիչքներով 23 կմ շառավղով:</p>	<p>1 Specifications of the Procurement Subject</p> <p>1.1 Flight checks shall be carried out to confirm the compliance of ILS CAT I-II, DVOR and DME equipment with the requirements of volume 1 of ICAO Annex 10 and in accordance with ICAO DOC 8071.</p> <p>1.2 The lists of parameters to be checked for ILS/DME CAT II and DVOR/DME equipment of "Zvartnots" airport and ILS/DME CAT I of "Shirak" airport are presented in the corresponding tables of document DOC 8071 "Manual on Testing of Radio Navigation Aids" Volume 1.</p> <p>2. Acquisition terms of the Procurement subject services.</p> <p>2.1. Annual flight checks shall be carried out for ILS/DME CAT II (two semi sets) and DVOR/DME (two semi sets) installed in "Zvartnots" airport and ILS/DME CAT I (two semi sets) installed in "Shirak" airport.</p> <p>2.2. Flight checks shall be carried out within October-November period of 2021. The exact date of the service provision will be defined by bilateral agreement.</p> <p>2.3 During the flight checks the flights shall be carried out according to the landing charts (see current AIP ARMENIA). Flight checks of DVOR/DME shall be performed only by circling 23 km in radius.</p>
--	--

<p>2.4 Թռիչքային ստուգումները պետք է իրականացվեն ICAO-ի DOC 8071 փաստաթղթի պահանջներով: Չափազրումների արդյունքների հիման վրա պետք է գնահատվի սարքավորումների փաստացի բնութագրերի համապատասխանությունը գործող պահանջներին և եզրակացություն տրվի դրա վերաբերյալ համապատասխան ակտերի ձևով: Ակտերին պետք է կցվեն բոլոր չափազրումների տպագիր արդյունքները:</p>	<p>2.4. Flight checks shall be carried out according to the requirements of ICAO DOC 8071. The compliance of the actual equipment specifications with the current requirements shall be evaluated based on results of the calibration and a conclusion shall be submitted through respective acts. All the calibration results shall be printed and attached to the acts.</p>
<p>2.5 Ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ բոլոր ծախսերը (ավիավառելիք, ակրոնավիզացիոն վճարներ, աներոդրումային սպասարկման վճարներ և այլն) պետք է հոգա Կատարողը: Վերջինս պարտավորվում է իր հաշվին ապահովել և տրամադրել.</p> <ul style="list-style-type: none"> • պատրաստի և սարքին վիճակում գտնվող օդանավ-լաբորատորիա (հետագայում՝ OL), • ավիացիոն տեխնիկայի սպասարկման և ծառայության մատուցման համար անհրաժեշտ պատրաստվածությունը լիակազմ տեխնիկական և օդանավի անձնակազմեր: • ավիավառելիքով OL լիցքավորումը, • դեպի ծառայությունների մատուցման վայր և հետ թռիչքների պլանավորումը և պետական թույլտվությունների ստացումը, • OL-ի տեխնիկական սպասարկումը և վերանորոգումը, • OL-ի, անձնակազմի և երրորդ անձանց հանդեպ պատասխանատվության ապահովագրումը, • դեպի ծառայությունների մատուցման վայր և հետ թռիչքների ժամանակ պետական, մաքսային, ակրոնավիզացիոն, աներոդրումային և այլ պարտադիր վճարների կատարումը, • պատվիրատուին տրամադրել մատուցված ծառայությունների արդյունքների վերաբերյալ համապատասխան կերպով ձևավորված տեխնիկական փաստաթղթեր, • օդանավ-լաբորատորիայի թռիչք-վայրէջքների համար նախատեսված վճարումները, • թռիչքների օդերևութաբանական տեղեկատվության ապահովումը, • OL-ի և անձնակազմի պահպանությունը, գետնի վրա ինքնաթիռի առևանգումը, վնասումը կամ անձնակազմի վրա 	<p>2.5. All the expenses for the Service provision (fuel, air navigation fees, aerodrome maintenance fees, etc.) shall be borne by the service provider. The latter shall provide at his own expense:</p> <ul style="list-style-type: none"> • Serviceable flight check aircraft ready for operation (hereinafter referred to as FCA), • Maintenance and flight crews professionally knowledgeable about aviation equipment maintenance and Service provision, • FCA refueling, • receipt of state permits and planning of flights to the Service provision destination and back, • FCA maintenance, • Insurance of FCA, crew and third party, • Payment of state, customs, air navigation, aerodrome and other mandatory fees while carrying out flights to the Service provision destination and back, • Submission of respective technical documents to the Customer on the results of the rendered Service, • Payments for FCA take-offs and landings, • Provision of meteorological information, • FCA and flight crew security provision on the ground to prevent aircraft hijacks and damages or attacks on the flight crew, as well as provision of Performer's

<p>հարձակումը բացառելու նպատակով, ինչպես նաև Կատարողի անձնակազմի անվտանգության ապահովումը կացության ողջ ընթացքում:</p> <p>Այն դեպքում, եթե մատուցողը օդանավի անսարքության պատճառով չի կարողանում մատուցել նախատեսված ծառայությունը, ապա Կատարողը պարտավորվում է 30 օրվա ընթացքում անսարք օդանավը փոխարինել սարքինով:</p> <p>2.6 Օդանավ-լաբորատորիան պետք է հագեցված լինի ICAO-ի DOC 8071 փաստաթղթով ներկայացվող պահանջներին համապատասխան թռիչքային ստուգումներ իրականացնելու սարքավորումներով: Մասնակիցը պետք է ներկայացնի օդանավ շահագործողի գործող սերտիֆիկատ, ինչպես նաև օդանավային և վերգետնյա սարքավորումների ստուգաչափմանը վերաբերող գործող սերտիֆիկատները:</p> <p>2.7 ՕԼ-ին ներկայացվող պահանջները.</p> <ul style="list-style-type: none"> • <<Ավտոպիլոտ>> համակարգը պետք է ապահովի վայրէջքը՝ CAT I և CAT II ICAO, • Թռիչքի աշխատանքային բարձրությունը պետք է լինի ոչ պակաս քան 7000մ, • Ինքնաթիռի քանո առավելագույն կողային բաղադրիչը, վայրէջք կատարելիս պետք է լինի առնվազն 12 մ/վ, • Ինքնաթիռի տեսակը՝ Super King 350 (B300), Cessna 560XL, կամ համարժեք, • Օդանավ լաբորատորիան պետք է ունենա առնվազն մեկ նստատեղ պատվիրատուի ներկայացուցչի համար: <p>2.8 Մասնակիցը պետք է ունենա գործող թռիչքային վկայականներ ունեցող թռիչքային անձնակազմ և թռիչքային ստուգումներ իրականացնող մասնագետ (ինժեներ-օպերատոր), որի հետ հաղորդակցությունը թռիչքային ստուգումների ընթացքում պետք է իրականացվի ռուսերեն լեզվով:</p> <p>2.9 Ծառայությունների մատուցման համար Պատվիրատուն իր հաշվին ապահովելու է.</p> <ul style="list-style-type: none"> • թռիչքային ստուգումների սկիզբը՝ ոչ ուշ քան օդանավ-լաբորատորիայի ժամանումից հետո 6 ժամվա ընթացքում, • ավիացիոն իշխանությունների, 	<p>personnel security during the whole period of stay.</p> <p>If the provider is unable to deliver the planned service due to the aircraft malfunction, the Performer shall be obliged to replace the unserviceable aircraft with a serviceable one within 30 days.</p> <p>2.6 The FCA must be equipped with flight inspection equipment in accordance with the requirements of ICAO DOC 8071. The participant must present a valid aircraft operator certificate as well as valid calibration certificates for FCA and ground equipment.</p> <p>2.7 Requirements for the FCA:</p> <ul style="list-style-type: none"> • The "Autopilot" system shall provide landing according to ICAO CAT I and CAT II, • Cruising altitude shall be no less than 7000 metres, • During landing the crosswind component shall be 12 metres per second at the least, • Aircraft type shall be Super King 350 (B300), Cessna 560XL or equivalent, • The FCA shall have at least one seat for the costumer's representative. <p>2.8 The participant must have a flight crew with valid flight certificates and a flight inspector (operator-engineer), with whom communication during flight checks must be carried out in Russian.</p> <p>2.9. The Customer shall provide the following for the Service provision at his own expense:</p> <ul style="list-style-type: none"> • The beginning of flight checks no later than in 6 hours after arrival of the FCA, • Cooperation between aviation
--	---

<p>օդանավակայանային ծառայությունների և ՕԼ անձնակազմի միջև համագործակցությունը թռիչքային ստուգումների իրականացման ընթացքում,</p> <ul style="list-style-type: none"> • թռիչքային ստուգումների համար անհրաժեշտ տեղեկատվությամբ, ՌՏԱ միջոցների տեղակայման սխեմաներով, տեղեկատվական տվյալներով, ՆՈՏԱՄ-ներով և այլն: <p>3. Վերջնաժամկետը՝ 30.11.2021թ.</p>	<p>authorities, airport services and FCA crew while carrying out flight checks;</p> <ul style="list-style-type: none"> • Information necessary for flight checks, NAVAIDs disposition charts, aeronautical information, NOTAMs, etc. <p>3. Deadline 30.11.2021.</p>
---	--

By Customer
 Artur GASPARYAN
 General Director
 of "ARMATS" CJSC

signature / ստորագրություն
 Stamp / Կ.Տ.



Պատվիրատուի կողմից
 Արթուր ԳԱՍՊԱՐՅԱՆ
 <<Հայաէրոնավիգացիա>> ՓԲԸ
 Գլխավոր տնօրեն

By Performer
 Wolfgang Jores
 Director
 of Flight Precision Ltd

signature / ստորագրություն
 Stamp / Կ.Տ.



Կատարողի Կողմից
 Վոլֆգանգ Յորես
 <<Flight Precision>> ՍՊԸ
 Տնօրեն

Հավելված N 2
 « 16 » 08. 2021 թ. կնքված
 ՀԱՆ-ԳՀՄՊՁԲ-08/21 ծածկագրով պայմանագրի
 Appendix 1

to the procurement contract
 under code "ARM-GHTsDzB-08/21"
 signed on " " 2021

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԱՑՈՒՑՑ
PAYMENT SCHEDULE

Եվրո Euro

Ծառայության Service							
հրավերով նախատեսված չափաբաժնի Number of the lot provided by the invitation	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄՍ դասակարգման (CPV) Code indicated in the procurement plan according to CPV classification	Անվանումը Name	նիստաց նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ սախմանի, այդ թվում Payments shall be made to the Performer according to months of 2021, in addition				
1	71631230/1	Թռիչքային առուգման ծառայություններ Flight Check Services	<table border="1"> <tr> <td>December դեկտեմբեր</td> <td>57320</td> </tr> <tr> <td>Ընդամենը Total</td> <td>57320</td> </tr> </table>	December դեկտեմբեր	57320	Ընդամենը Total	57320
December դեկտեմբեր	57320						
Ընդամենը Total	57320						

By Customer
 Artur GASPARYAN
 General Director
 of "ARMATS" CJSC

By Performer
 Wolfgang Jores
 Director
 of Flight Precision Ltd

Պատվիրատուի կողմից
 Արթուր ԳԱՍՊԱՐՅԱՆ
 <<Հայաստանի Վերակառուցման ֆուլիգիտացիա>> ՓԲԸ
 Գլխավոր տնօրեն

Կատարողի կողմից
 Վոլֆգանգ Յորես
 <<Flight Precision>> ՍՊԸ
 Տնօրեն

Հավելված N3
 «16» 08 2021 թ. կնքված
 ՀԱՆ-ԳՀԱՊՊԶԲ-08/21 ծածկագրով պայմանագրի
 Appendix 1

to the procurement contract
 under code "ARM-GHTsDzB-08/21"
 signed on " " 2021

Contract party	Customer	Պայմանագրի կողմ	Պատվիրատու
Address: A/N: Tax payer's A/N:	Address: A/N: Tax payer's A/N:	Գտնվելու վայրը - հհ - հվհհ -	Գտնվելու վայրը - հհ - հվհհ -
Address: A/N: Tax payer's A/N:	Address: A/N: Tax payer's A/N:	Գտնվելու վայրը - հհ - հվհհ -	Գտնվելու վայրը - հհ - հվհհ -
Address: A/N: Tax payer's A/N:	Address: A/N: Tax payer's A/N:	Գտնվելու վայրը - հհ - հվհհ -	Գտնվելու վայրը - հհ - հվհհ -
Address: A/N: Tax payer's A/N:	Address: A/N: Tax payer's A/N:	Գտնվելու վայրը - հհ - հվհհ -	Գտնվելու վայրը - հհ - հվհհ -
Address: A/N: Tax payer's A/N:	Address: A/N: Tax payer's A/N:	Գտնվելու վայրը - հհ - հվհհ -	Գտնվելու վայրը - հհ - հվհհ -
Address: A/N: Tax payer's A/N:	Address: A/N: Tax payer's A/N:	Գտնվելու վայրը - հհ - հվհհ -	Գտնվելու վայրը - հհ - հվհհ -
Address: A/N: Tax payer's A/N:	Address: A/N: Tax payer's A/N:	Գտնվելու վայրը - հհ - հվհհ -	Գտնվելու վայրը - հհ - հվհհ -
Address: A/N: Tax payer's A/N:	Address: A/N: Tax payer's A/N:	Գտնվելու վայրը - հհ - հվհհ -	Գտնվելու վայրը - հհ - հվհհ -
Address: A/N: Tax payer's A/N:	Address: A/N: Tax payer's A/N:	Գտնվելու վայրը - հհ - հվհհ -	Գտնվելու վայրը - հհ - հվհհ -
Address: A/N: Tax payer's A/N:	Address: A/N: Tax payer's A/N:	Գտնվելու վայրը - հհ - հվհհ -	Գտնվելու վայրը - հհ - հվհհ -
Address: A/N: Tax payer's A/N:	Address: A/N: Tax payer's A/N:	Գտնվելու վայրը - հհ - հվհհ -	Գտնվելու վայրը - հհ - հվհհ -

Հավելված N 3.1
 «16» 08 . 2021 թ. կնքված
 ՀԱՆ-ԳՀԱՊՁԲ-08/21 ծածկագրով պայմանագրի
Appendix 1
to the procurement contract
under code "ARM-GHTsDzB-08/21"
signed on "_____ " _____ 2021

DOCUMENT N 1

Certifying the Actual Delivery of the Contract Result to the Customer

ԱԿՏ N 1

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Service Ծառայության		
Name Անվանումը	Measurement Unit Չափման միավորը	Volume (actual) Քանակը (փաստացի)

This document is drawn up in 2 copies; each Party will be given one copy.

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

PARTIES/ԿՈՂՄԵՐԸ

Delivered by

Հանձնեց

signature

ստորագրություն

name, surname

անուն, ազգանուն

Accepted by (Bid Projecting Representative)

Ընդունեց (Հայտը նախագծած ներկայացուցիչ)

signature / ստորագրություն

name, surname \ անուն, ազգանուն

